«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

«MATENADARAN»
MESROP MASHTOTS
INSTITUTE OFANCIENT
MANUSCRIPTS

Երևան, Մաշտոցի պող. 53, ☎51-30-00
Yerevan, Mashtots Av. 53, ☎51-30-00
Email: contact@matenadaran.am

0-513

22.10.2026

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Մեծարգո տիկին Անդրեասյան,

Մատենադարանի պատվիրակության՝ 2026 թ. հոկտեմբերի 15–20-ը Լիբանան կատարած աշխատանքային այցի վերաբերյալ ներկայացնում եմ հետևյալ հաշվետվությունը:

1. Անթիլիաս. հանդիպում Կաթողիկոսի հետ և ձեռագրերի մշտադիտարկման մեկնարկ.

Մատենադարանի պատվիրակությունը հանդիպել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի հետ՝ քննարկելով ձեռագրական ժառանգության պահպանության ոլորտում համագործակցության զարգացումը:

Այցի առանցքային արդյունքը Կաթողիկոսության ձեռագրական հավաքածուի մասնագիտական մշտադիտարկման մեկնարկն էր, որը նախատեսում է ձեռագրերի վիճակի, պահպանության պայմանների և հնարավոր ռիսկերի պարբերական գնահատում:

2. Ջմմառ. նոր ձեռագրատան բացում և երախտագիր

Պատվիրակությունը մասնակցել է Ջմմառի Մայրավանքի նոր ձեռագրատան և դիվանի բացմանը: Դրանց ստեղծմանն աջակցել են Մատենադարանի մասնագետները:

Երեքամյա համագործակցության և ձեռագրական ժառանգության պահպանության գործում ունեցած ներդրման համար Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանն արժանացել է երախտագրի:

3. Քասլիկի «Սուրբ Հոգի» համալսարան. համագործակցության նոր հեռանկարներ

Համալսարանի ղեկավարության և մասնագետների հետ քննարկվել են հայկական և արաբատառ ձեռագրերի վերականգնման, թվայնացման ու համատեղ հետազոտությունների հնարավորությունները: Համալսարանի ներկայացուցիչները հրավիրվել են մասնակցելու Մատենադարանի 2027 թվականի գիտական միջոցառումներին:

Այցի հիմնական արդյունքները

* Մեկնարկել է Անթիլիասի ձեռագրական հավաքածուի մասնագիտական մշտադիտարկումը:

* Ամրապնդվել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ համագործակցությունը՝ Արամ Ա Կաթողիկոսի հետ հանդիպման շրջանակում:

* Բացվել է Մատենադարանի մասնագիտական աջակցությամբ ստեղծված Ջմմառի նոր ձեռագրատունը, և տնօրենին շնորհվել է երախտագիր:

* Նախանշվել են Քասլիկի համալսարանի հետ համատեղ ծրագրերի ուղղությունները:

Այցը նպաստել է արտերկրի հայկական ձեռագրական հավաքածուների պահպանության գործում Մատենադարանի մասնագիտական ներգրավվածության ընդլայնմանը:

ԱՐԱ ԽԶՄԱԼՅԱՆ

ՏՆՕՐԵՆ